Կարգապահական գործ թիվ ԿԳ-26159

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄՀԵՐ ՇԱՎԱՐՇԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյան,

մասնակցությամբ՝ փաստաբան Մհեր Բադալյան,

քննության առնելով փաստաբան Մհեր Շավարշի Բադալյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1005) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Փաստաբան Մուշեղ Վարդանյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ հանդիսացել է թիվ ՍԴ/0012/01/25 քրեական գործով տուժողի լիազոր ներկայացուցիչը: Նշված գործով 23.03.2026 թվականին տեղի է ունեցել հերթական դատական նիստը, որի ընթացքում ամբաստանյալի պաշտպան Մհեր Բադալյանն իր հասցեին թույլ է տվել հետևյալ արտահայտությունները՝ «լավ է, դու էլ մի ելույթ ունեցիր, տեղում նստի», «բոլա մանկլավիկությունս ըրալ», «Մուշեղ, քեզ խելոք պահի, եթե մի անգամ էլ իմ հարցին ընդհատես՝ պատասխան ես տալու»:

Դիմողը ներկայացրել է դատական նիստի ձայնագրառման կրիչը:

Հայտնելով վերոգրյալը՝ Դիմողը խնդրել է փաստաբան Մհեր Բադալյանի

Թիվ ԿԳ-26159-2-Ա
05.08.2026թ.

նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 22.05.2026թ. Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 29.05.2026թ. և 01.06.2026թ. ներկայացրել է բացատրություն և պահանջվող ապացույցները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Միեր Բաղալյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն փաստաբան Մուշեղ Վարդանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբան Միեր Բաղալյանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 22.05.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 01.06.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2023թ. մարտի 23-ին ժամը՝ 11:00-ից սկսած մոտ մեկու կես ժամվա ընթացքում, թիվ ՍԴ/0012/01/25 քրեական գործով փաստաբան Մուշեղ Վարդանյանը բազմիցս փորձել է իր անտրամաբանական և դատավարական սխալների խախտմամբ հարցերով ու խոսքով միջամտել Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարմանն ուղղված գործողություններին:

Փաստաբանը անդրադառնալով նիստի ժամանակ իր կողմից կատարված «Մուշեղ հերիք է մանկականություն անես և նստած տեղից ելույթ մի ունեցի, եթե մեկ անգամ էլ խանգարես իմ հարցերի ժամանակ, այն պատասխանես տալու» արտահայտությանը նշել է, որ դրանով չի վիրավորել Դիմողին և նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի ցուցաբերել:

Փաստաբանը հայտնել է, որ իր խոսքում մանկական և մանկականություն բառերը օգտագործվել են միայն այն իմաստով, որ մարդը լուրջ չէ, երեխայական պահվածք և ոչ պատասխանատու պահվածք ունի այն դեպքերում, երբ պետք է լուրջ լինել:

Փաստաբանը նշել է, որ անգամ դատավորը վիրավորական չի համարել Փաստաբանի կողմից կատարած արտահայտությունները:

Փաստաբանի կողմից մեջբերված ստուգաբանական և բացատրական

մեջբերումներից հետո, վերջինս եկել է այն եզրահանգման, որ կատարված արտահայտության մեջ վիրավորական բան չկա՝ հակառակ դեպքում դատարանը կարձանագրեր տվյալ փաստը:

Ելնելով վերոգրյալից, Փաստաբանը խնդրել է Մուշեղ Վարդանյանի բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.04.2026թ. թիվ 289-Ա/ԿԳ-26159 որոշմամբ փաստաբան Միհեր Բաղալյանի նկատմամբ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1-ին, 5.1.2-րդ և 5.2.1-ին ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

27.04.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.06.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.06.2026թ:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 29.07.2026թ. ժամը 18:30-ին, 05.08.2026թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Դիմող, փաստաբան Մուշեղ Վարդանյանը քրեական գործով հանդիսացել է տուժողի լիազոր ներկայացուցիչը, իսկ փաստաբան Միհեր Բաղալյանը՝ նույն գործով մեղադրյալի պաշտպանը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես*

նաև դատական նիստերի ձայնագրություններով:

2. Նշված գործով 23.03.2026 թվականին կայացած դատական նիստի ընթացքում ամբաստանյալի պաշտպան Միեր Բադալյանը փաստաբան Մուշեղ Վարդանյանի հասցեին թույլ է տվել հետևյալ արտահայտությունները՝ *«լավ է, դու էլ մի ելույթ ունեցիր, տեղում նստի», «բոլա մանկլավիկությունս ըրալ», «Մուշեղ, քեզ խելոք պահի եթե մի անգամ էլ իմ հարցին ընդհատես՝ պատասխան ես տալու»: Սույն փաստը հաստատվում է 23.03.2026 թվականի դատական նիստի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Միեր Բադալյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010 թվականից և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Միեր Բադալյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1-ին, 5.1.2-րդ և 5.2.1-ին ենթակետերի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<u>7.1 Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման մասով.</u>

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Կանոնագրքի 4.1-ին ենթակետի բովանդակությունից հետևում է, որ դատական վարույթին մասնակցող փաստաբանը, օգտվելով իրեն վերապահված դատավարական իրավունքներից և ներկայացնելով վստահորդի շահերը, միաժամանակ պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ:

Սույն գործով հաստատված է, որ փաստաբան Միեր Բադալյանը թիվ ՍԴ/0012/01/25

քրեական գործով հանդես է եկել որպես մեղադրյալի պաշտպան, իսկ փաստաբան Մուշեղ Վարդանյանը՝ որպես տուժողի ներկայացուցիչ, հետևաբար Կանոնագրքի 4.1-ին ենթակետի իմաստով հանդիսացել է դատավարության մասնակից:

23.03.2026 թվականի դատական նիստի ձայնագրությամբ հաստատվում է նաև, որ Փաստաբանը Դիմողի հասցեին հնչեցրել է «լավ է, դու էլ մի ելույթ ունեցիր, տեղում նստի», «բոլա մանկլավիկությունս ըրալ», «Մուշեղ, քեզ խելոք պահի, եթե մի անգամ էլ իմ հարցին ընդհատես՝ պատասխան ես տալու» արտահայտությունները:

Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի բացատրությունն այն մասին, որ Դիմողը դատական նիստի ընթացքում բազմիցս միջամտել է իր հարցադրումներին, և վիճարկվող արտահայտությունները եղել են այդ վարքագծի արձագանքը: Այդուհանդերձ, անգամ նման միջամտության առկայությունը փաստաբանին չի ազատում դատավարության մասնակցի նկատմամբ հարգալից վերաբերմունք պահպանելու պարտականությունից:

Հանձնաժողովը հիմնավոր չի համարում նաև Փաստաբանի այն փաստարկը, որ դատարանը նշված արտահայտությունները վիրավորական չի գնահատել: Դատարանի կողմից դրանց վերաբերյալ առանձին արձագանքի բացակայությունը չի բացառում այդ նույն վարքագծի գնահատումը փաստաբանական էթիկայի կանոնների տեսանկյունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վերը նշված վարքագծով խախտվել է Կանոնագրքի 4.1-ին ենթակետի պահանջը:

<u>Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 կետերի պահանջների խախտման մասով</u>.

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական գործընկերներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*

Կանոնագրքի 5.2.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններ կամ արտահայտություններ (ներառյալ՝ չպետք է այլ փաստաբանին վիրավորական քննադատի):*

Կանոնագրքի 5.1.2-րդ ենթակետը փաստաբանին պարտավորեցնում է մյուս փաստաբաններին վերաբերվել որպես մասնագիտական գործընկերների և նրանց նկատմամբ դրսևորել անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք, իսկ 5.2.1-ին ենթակետով արգելվում են այլ փաստաբանի պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններն ու արտահայտությունները:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնը՝ մյուս բոլոր փաստաբաններին որպես մասնագիտական գործընկերներ ընդունելու, նրանց նկատմամբ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերելու և այլ փաստաբանի նկատմամբ նրա՝ որպես փաստաբանի արժանապատվությունը և համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է,

քանի որ չի կարող իր նկատմամբ **հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:**

Սույն գործով վիճարկվող արտահայտություններն ուղղվել են ոչ թե պարզապես դատավարության մեկ այլ մասնակցի, այլ նույն գործին մասնակցող մեկ այլ փաստաբանի: Հետևաբար Փաստաբանի վարքագիծը գնահատման է ենթակա նաև փաստաբանների միջև հարաբերությունները կարգավորող վերոնշյալ կանոնների տեսանկյունից:

Հանձնաժողովը գտնում է, որ «տեղում նստի», «քեզ խելոք պահի» և «պատասխան ես տալու» ձևակերպումները չեն կարող դիտվել որպես փաստաբանի մասնագիտական դիրքորոշման քննադատություն կամ դատավարական առարկություն: Դրանք անմիջականորեն ուղղված են Դիմողին և իրենց ձևով ու բովանդակությամբ քաղաքավարի չեն:

Անդրադառնալով «բոլա մանկլավիկությունս ըրալ» արտահայտությանը՝ Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի բացատրությունը, որ «մանկլավիկություն» բառով նկատի է ունեցել Դիմողի ոչ լուրջ կամ երեխայական վարքագիծը և նրան վիրավորելու նպատակ չի ունեցել: Սակայն տվյալ արտահայտությունը չի կարող գնահատվել միայն Փաստաբանի կողմից դրան տրված բացատրությամբ կամ բառի առանձին բառարանային նշանակությամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն իրավիճակը, որում այն օգտագործվել է: Տվյալ դեպքում այն հնչել է նույն խոսակցության ընթացքում՝ «տեղում նստի», «քեզ խելոք պահի» և «պատասխան ես տալու» արտահայտությունների հետ միասին: Այդ համատեքստում «մանկլավիկություն» բնորոշումը վերաբերում է Դիմողի վարքագծին և կրում է նրան նսեմացնող բնույթ:

Ընդ որում, եթե Փաստաբանը նպատակ ուներ միայն մատնանշել Դիմողի կողմից իր հարցադրումներին միջամտելու հանգամանքը, կարող էր հենց այդ վարքագիծը քննադատել՝ առանց Դիմողին անձնական բնույթի գնահատական տալու: Միաժամանակ, այլ փաստաբանի արժանապատվությունը նսեմացնող արտահայտության գնահատման համար որոշիչ նշանակություն չի կարող ունենալ միայն այն հանգամանքը, թե Փաստաբանը տվյալ արտահայտությամբ նպատակ ունեցե՞լ է վիրավորել Դիմողին, թե ոչ:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից Դիմողի հասցեին հնչեցված արտահայտություններով խախտվել են Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի*

կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժի, ինչպես նաև լրացուցիչ տույժի՝ «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստման դասընթացների մասնակցության կիրառումը համաչափ է կատարված խախտման բնույթին: Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված տույժերի համակցված կիրառումը բավարար է կատարված խախտմանը պատշաճ արձագանքելու, մասնագիտական հաղորդակցության չափանիշների պահպանման անհրաժեշտությունը շեշտելու և հետագայում նույնաբնույթ վարքագիծը կանխելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գնահատելով սույն կարգապահական գործով արձանագրված խախտման բնույթն ու հետևանքները, Փաստաբանի մեղքի աստիճանը, ինչպես նաև կարգապահական տույժերի բացակայության հանգամանքը՝ Հանձնաժողովը գտնում է, որ առավել խիստ կարգապահական տույժի կիրառումն անհրաժեշտ և համաչափ չէ:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ Փաստաբանը գիտակցել է իր կողմից դրսևորվող վարքագծի բնույթը և գիտակցաբար է Դիմողի հասցեին հնչեցրել վիճարկվող արտահայտությունները, ուստի Կանոնագրքի վերոնշյալ պահանջների խախտումը կատարվել է դիտավորությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Մեր Շավարշի Բաղալյանի (արտոնագիր՝ թիվ 1005) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա

ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1-ին, 5.1.2-րդ և 5.2.1-ին ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26159-2-Ա
05 օգոստոսի 2026թ.
ք.Երևան